

Փարիզում 1852 թ. սկսվումէ հին քաղաքի քանդիլը, լծորդուած նոր շինութեանց սաստիկ ոգեւորութեամբ. ուստի նոր տներ շինուեցին մի առանձին ջերմաջերմ եռանդով: Փարիզի մէջ 1811 թ. արդէն երևումէ 57,686 տուն (չըհաշուելով շինութիւններն ծառայից, խոհանոցի գոմանոցի համար ելն.) և այս տներում 612,500 առանձին բնակարաններ, որոնց մէջ 481,500 բնակարանները փոքր էին չափով, գնով էլ չէին աւելի 400-կան ֆրանկից: Տների թիւը Փարիզում 1870 թ. հասնումէ մինչև 73,624. ուրեմն 16 տարուայ ընթացքում (1854 մինչև 1870 թ.) Փարիզումը շինուեցին $22\frac{1}{2}$ հազար տներ, որոնց մէջ կարելի էր արձակ կերպով և յարմարութեամբ տեղաւորուել և սորա հետ միասին շատ խիստ ուշադրութիւն դարձրին նոցա առողջապահական և մաքուր պայմանների վերայ (санитарный):

(Շարունակելի)

(Թարգմ.) Զ. Տէր Զաքարեանց:

ԲՈՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀՈՌՈՄԱՅ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ.

Ի Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 1884

(Շարունակելի Արար. Լ. Ը.):

Եղուխաների գլխաւորը ուրիշների հետ Նիկոլին տանումէ Լատին արքեպիսկոպոսի մօտ՝ որ պատգամաւոր ուղարկեց քաղաքի իշխանին Նիկոլի առաջ Հայոց եկեղեցիների դռները բանալ կարգադրելու համար. ստկայն երբ հայերը կամովին չըկամեցան եկեղեցու դուռը բանալ՝ մի օր ժողովուեցին շատ եղուիթներ և գնալով քաղաքի իշխանի և դատաւորների մօտ՝ նոցանից զօրականներ և մարդիկ վերառան և եկան Հայոց եկեղեցու դուռը. առաջարկեցին եկեղեցու դռները բանալ, և երբ Հայերը հրաժարուեցին, այն ժամանակ եկեղեցու դռները ջարդեցին և Նիկոլին մոցրին եկեղեցի և եկեղեցին իւր գոյքերով ու հարքսութեամբ յանձնեցին նորան: Եւ ոչ այս չափ միայն՝ այլև հետամուտ եղան Հայոց մեծամեծներին և իշխաններին բանտարկել: Առաքել վարդապետ այսպէս է նկարագրում Ելվովի Հայոց Մայր եկեղեցու գոյքը. — « Եւ ի մէջ եկեղեցւոյն կայր գանձատուն, և ի նմա գիրք և անօթք յոյժ բազումք, գրեանք աւելի քան զհազար փերթ, ամենեքեան ընտիրք և պատուականք և

վարդապետականք, յորս էին ոսկետուփ Աստուածաշունչք և Շարակնոցք և այլք գրեանք բազումք. սոյնպէս և անօթք, սիկհք և խաչք, քշոցք և բուրվառք, կանթեղք և աշտանակք, շուրջառք եմփփորոնք, թագք և վահապք, սուրբ նշանք և սրբոց նշխարք և որ ի հարց և ի հաւուց, ի վաղեմի և ի նախկին թագաւորաց ունէին մուրհակք և նոմոսք և այլ ևս ինչ յոյժ բազում. սոքա ամենեքեան ի մէջ եկեղեցւոյն էին ի նոյն գանձատան, զորս գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ Նիկիոյն: Ոչ միայն զայս եկեղեցիս, այլ և զայլ եկեղեցիսն և զվանօրայսն, որք ի քաղաքին և որք շուրջ գաղափառն էին և զամենայն աւանդս նոցա, զտուն և զանգատոանս, զաղօրիս և զխանութս կալաւ եպիսկոպոսն ընդ իւրով իշխանութեամբն ստեղծով. Ես եմ եպիսկոպոս, իմ են եկեղեցիք ամենեքեանք և աւանդք իւրեանց: Իսկ խաչատուր վարդապետն և ամենայն ժողովուրդք Հայոց, որք ի լոյ կային, մնացին արտաքոյ եկեղեցւոյ. քանզի թէ մօտանէին յեկեղեցին՝ հարկ էր նոցա մօտանել ընդ իշխանութեամբ փափին և ընդունել զնորին գաւանդութիւնն, այլ և պարտ էր հնազանդել Նիկիոյայի եպիսկոպոսին: Եւ լովացիք ոչ ախորժէին զայսոսիկ, վասնորոյ եղեն վարանեալք և տարակուսեալք և ոչ կարէին գտանել զճար ինչ: Եւ մնացին ժողովուրդք Հայոց, որք ի լոյ քաղաքին էին՝ առանց եկեղեցւոյ. (Վեր. ԾԶ. — ԾԷ.):

Խաչատուր վարդապետը քաղաքից դուրս, Ս. Խաչ վանքումն էլ չըկարողացաւ հանգիստ մնալ. վասն զի Նիկիոյի դրդմամբ զինուորները շրջապատեցին վանքը և թուրքի լրտես էին որոնում, մինչև որ Նիկիոյ վրայ հասաւ և զինուորներին ճանապարհ դնելով՝ ինքն վարդապետին առաւ և քաղաք բերեց, որ տեսնելով թէ եղուխոնների հետ հաւատոյ խնդիրների մասին իւր վարած վէճերը օգուտ չունին, Իլիովից դուրս եկաւ և վերադարձաւ Էջմիածին, « առ Մօսէս կաթողիկոս և առ այլ վարդապետոն, որք ամենեքեան ցաւագին սրտիւ, արտասուաթօր աչօք սգային վասն Հայոց, որք էին ի լոյ քաղաքին, թէ զհարգ լինի փրկութիւն նոցա » (եր. ԾԷ): Խաչատուր վարդապետի հեռանալուց յետոյ Նիկիոյ « սկսաւ զամենայն ժողովուրդսն և զգանձս և զամենայն ինչս եկեղեցւոյն ուտել և մանրել և զմնացորդս առ ոտն արկանել » (եր. ԾԷ.): Հալածանքը հայ ժողովրդի վերայ սաստկացաւ: Նիկիոյը (ձեռնառութեամբ եզուխաց) շատ զօրացաւ և բռնացաւ ժողովրդի

վերայ. քանտարկումէր, երեք, չորս հարիւր ղռշ. տուգանք էր առնում. ննջեցեալները թաղելու, գերեզմանատեղի և գերեզմանաքար ձգելու համար փող էր պահանջում: «Աոյն պատճառի վասն և պսակք և մկրտութիւնք խափանեցան, զորս տարեալ յայլ քաղաքս՝ պսակէին և մկրտէին, և զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին: Եւ զայսոսիկ առնէին ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին: Եւ յորժամ իմանայր՝ մեծաւ ցամամբ զայրանայր և ըմբռնէր զերէցն և զարարող արսն բազում խոշտանգանօք չարչարէր և զծանրագոյն տուգանս առնոյր» (Եր. ԾԸ.): Այնքան սաստիկ էին սպառնալիքը և երկիւղը, որ երբ մի երիտասարդի գաղտնի պսակը յայտնուեց եպիսկոպոսին, նա զինւորներ ուղարկեց՝ հարսանեաց տիրոջը և պսակադիր քահանային բանտարկելու. այս երբ իմացան, «առ երկիւղէն սկսան թագչել, զոմն յերիցանց եղին ի մէջ սնդուկի և կոյսայիցին, իբր թէ կահք և զարդք կանացի գոլ, և երկուքն յերիջանցն մտին ի մէջ սորային, որ շինեալ էին ի մէջ տանն վասն հրավառութեան: Իսկ զօրականքն ի յուզելն և ի խնդրելն զերիցունսն՝ գտին ի մէջ սորային, հանին զնոսա ի սորայէն և կապեցին ձեռս յետս, գլխիբայ և բոկոտամբ, սեւացեալ երեսօք և մարմնով, զի մուր սորային սեւացուցեալ էր զնոսա. և այնպէս տարան զնոսա առաջի եպիսկոպոսին: Եւ եպիսկոպոսն յետ բազում անարգանաց և սպառնալեաց էարկ զերիցունսն և զտեարս հարսանեացն ի բանտ և էառ զչորս հարիւր ղռշ. յերիցանցն և զչորս հարիւր ղռշ. ի տեարց հարսանեաց՝ և ապա եթող, որք գնացեալք արարին զհարսանիսն: Եւ բազում տղայք մեռանէին առանց մկրտութեան, և բազում տղայք կային անմկրտեալք հնգետստան և վեշտասանամեայ. բազումք հիւանդք առանց հաղորդութեան մեռանէին, և բազում մեռեալք մնային անթաղք յամս բազումս: Դնէին զմեռեալսն ի մէջ փայտեայ տաղանի և ընուին զտապանսն կարով՝ մինչև որ ծածկէր զմեռեալն և զնէին ի ցուրտ տեղիս և պահէին՝ սպասելով այցելութեան Տեառն: Եւ բովանդակ եօթն խորհուրդք եկեղեցւոյ և ամենայն ժամակարգութիւն խափանեցաւ: Եւ մնացին ողորմելի ժողովուրդքն ի մէջ անհնար նեղութեանց՝ առաւել քան զոր ի ժամանակս կռապաշտութեան» (Եր. ԾԹ.):

Այսքան տառապանաց ենթակայ ժողովրդի յոյսը մնացել էր Ս. Էջմիածին. ուստի Սիմօն անուշով մի քահանայ և մի երեւելի

աշխարհական մարդ ուղարկեցին Մովսէս Կաթուղիկոսի մօտ, որ լսելով նոցա թշուառութիւնները, աղաչանաց թուղթ գրեց Լեհաց Վլատիսլաւ թագաւորին և նորա իշխաններին, Իլլովի արքեպիսկոպոսին և Փափին: Թագաւորը հասու լինելով Կաթուղիկոսի աղաչանքին՝ կամեցաւ Հայոց եկեղեցին յանձնել Հայոց, բայց Եզուխոնները ընդգիմացան՝ առարկելով թէ թագաւորը իբրեւ աշխարհական իրաւունք չունի հոգեւոր գործերի մէջ խառնուելու: Թագաւորը ինդրեց Իլլովի արքեպիսկոպոսից, որ նա յանձնէ Հայոց իրանց եկեղեցիները, սորան էլ ընդգիմացան Եզուխոնները: Երբոր թագաւորը ինքն կամեցաւ անձամբ գալ և յանձնել Հայոց իրանց եկեղեցիները, Նիկօլ (Իհարկէ խրատուած եզուխոններից) եկեղեցական ղգեսա հագած, սուրբ խորհուրդը գլխին դրած գուրս եկաւ թագաւորի առաջը: Թագաւորը զարհուրեց և ոչինչ չըկարողացաւ անել և վերադարձաւ իւր տեղը:

Հայերը պարտաւորեալ դիմեցին Հռօմ՝ աղաչանաց թուղթ առնելով թագաւորից ու Իլլովի արքեպիսկոպոսից: Պապին ներկայացրին նախ Մովսէս Կաթուղիկոսի թուղթը և ապա միւսները: Եթէ մի յոյս էլ կար պապից, այս տեղ ևս սատան յարեան Եզուխոնները: Ուստի ունայն յետ դարձան պատգամաւորները: Նիկօլ եպիսկոպոսն էլ, որ գնացած էր Հռօմ, յետ դարձաւ և ըստ առաջնոյն նեղումէր ժողովրդին: Հայերը մի քանի անգամ էլ դիմեցին Ս. Էջմիածին Մօսէսի մահից յետոյ Փիլիպպոս Կաթուղիկոսին, բայց Փիլիպպոսի թղթերն և ուղարկուած աշակերտների ջանքերն ևս ի գուր անցան: Փիլիպպոս Իլովացի նշանաւոր տանց զաւակներից, որոնք եկել էին Էջմիածին, մէկին Իլլովի եպիսկոպոս ձեռնադրեց, բայց ի գուր: Նախիջևանի Կաթուղիկաց հովիւ Պօղոս Դոմինիկեան վարդապետին մեծ սէր ցոյց տուեց, որպէս զի նա բարեխօսի պապի մօտ Իլլովի հայերի համար: Նոյն աղաչանքն արին և Իլլովի հայերը, երբ Պօղոս այնտեղ էր, բայց Պօղոսի կարծեցեալ բարեխօսութիւնն էլ գուր անցաւ, վասն զի Եզուխոնների խորհրդով Նիկօլ նորից Հռօմ գնաց և խափանեց ամեն բան:

Եզուխոնների ձեռնառութեամբ երես առած Նիկօլ սկսեց բազմապատկել իւր անառակութեան գործերը, և ահագին ծախքերը ծածկելու համար սկսեց եկեղեցեաց արծաթեայ անօթները հրէաների ձեռքով ջարդել: Իսկ գրքերը և այլ անօթները որպէս հասարակ իրեր՝ վաճառել: «Եւ բազում գրեանք և անօթք ի նորին

վաճառելոցն եկին յերկիրս Հայոց և առ մեզ հասին. զորս վաճառականք գնով առեալ բերին, որ սքանչելի էր տեսողացն» (Եր. ԿԲ.): Այս պատճառով, նոքա որոնք հայրենի օրինաց և սրբութեանց նախանձախնդիր էին, իրանց տներից և տեղերից հեռացան, «անջատեալք յընտանեաց և յազգականաց, պանդուխտք և նժգեհճք շրջագայեալք յօտար աշխարհի. և այնպիսեալ կենօք հեծելով և յոգոց հանելով վախճանեցան» (Եր. ԿԲ.): Եւ այս թշուառութիւնը շարունակվումէր այն օրից, երբ Նիկիոյ եկեղեցին յափշտակեց Հայոց ՌՀԹ. — ՌՃԲ. Թիւր: Փիլիպպոս կաթուղիկոսի Երուսաղէմ և Կոստանդնուպօլիս գնալը. այս լսելով Նիկիոյ՝ Թոխաթեցի վաճառական ոմն Մարկոսի Սիմօն որդուց, որ գտնվումէր Իլլովում ստացաւ ձանապարհի ծախք և եկաւ Կոստանդնուպօլիս կաթուղիկոսի մօտ ներումն խնդրելու. Իլլովի Հայերը իրանց դատաւորներից Խաչիօ անունով մի մարդ ևս ուղարկեցին Փիլիպպոս կաթուղիկոսի մօտ:

Կաթուղիկոսը Նիկիոյին ներելու համար չորս բան պահանջեց. Նախ, որ Նիկիոյ և իւր հետեւողները Ս. Լուսաւորչի դաւանութիւնը խոստովանեն:

Երկրորդ, որ Հայաստանեայց եկեղեցւոյ արարողութիւնը կատարեն ինքն և իւր հետեւողները:

Երրորդ, որ Նիկիոյից յետոյ նորան յաջորդող եպիսկոպոսները Էջմիածնի կաթուղիկոսից լինին օծուած և նորանից կարգուեն առաջնորդ Իլլովի:

Չորրորդ, որ Նիկիոյ ջուր չըխառնէ Ս. Պատարագի խորհրդին. և ոչ ոք Պապի անունը չըյիշատակէ, և ոչ Նիկիոյին յաջորդող եպիսկոպոսները. իսկ Նիկիոյը միայն պատարագի ժամանակ պէտքէ յիշէ Պապի անունը, հետեւեալ պատճառով. «Եւ վասն յիշելոյ գանուն վափին Նիկիոյն ինքն խնդրեաց ի կաթուղիկոսէն, զի այնմ միայն ներումն արասցէ. քանզի Նիկիոյն ասաց, թէ ձեռագրաւն, զոր ես տուեալ եմ՝ ֆռանկաց՝ ի կարգէն լուծանեն զիս, գուցէ մահապարտ ևս առնեն. վասն այսորիկ ներեաց կաթուղիկոսն: »

«Եւ զայս չորս բանս գրեալս ի քարտիսի, կնքով կնքեալ և ձեռագրով գրոշմեալ՝ Նիկիոյ ետ կաթուղիկոսին Փիլիպպոսի և կաթուղիկոսն ետ Խաչիօ դատաւորին, զի ընդ իւր տարեալ ի քաղաքն Լով ի պահեստի ունիցին վասն առ յապայն զգուշութեան» (Եր. ԿԳ.): Այս ձեռագիրն ընդունելուց յետոյ Փիլիպպոս ներեց

Նիկօլին պատուիրելով զգաստանալ իւր Բախտաւոր և խէնէշ վարքից և ճանապարհ ձգեց դէպի Իլվով:

Արդնեցի Յօհան վարդապետը, որ նախ քան Նիկօլի Կ. Պօլիս գալը Փիլիպպոսից ուղարկուած էր Իլվով փրկութեան մի հնարք գտնելու, Նիկօլի վերադառնալուց յետոյ միջնորդ հաշտութեան դարձաւ ժողովրդի և Նիկօլի մէջ, և հաշտեցնելով ժողովրդին եպիսկոպոսի հետ տարաւ եկեղեցին, որ եպիսկոպոսը յափշտակել էր: Առաքել այսպէս է նկարագրում ժողովրդի եկեղեցի մտնելը. « Եւ եղև ի մտանել ժողովրդեանն յեկեղեցին՝ որպէս զխառնումն գառանց ի հօտս ոչխարոց մարց իւրեանց, գոռումն և գոշումն և ողբումն և աղիւղորմ լաց և փղձկեալ սրտիւ յորդառատ արտասուս հեղուլ ժողովրդոցն յաչաց իւրեանց մեծաւ հառաչմամբ, վասն տարփալի կարօտանաց և փափագանաց որ առ եկեղեցին իւրեանց. և անդէն յեկեղեցւոջ ի նոյն ժամու սկսաւ Յօհան վարդապետն մխիթարել զժողովուրդն յաստուածայնոց գրոց և ի վարուց և յօրինակաց սրբոց, որոյ բանից վերայ զովանայր սիրտ ժողովրդոց. և ածեալ ի համբոյր հաշտութեան զամենեսեան ընդ եպիսկոպոսին: Եւ ժողովուրդքն և եպիսկոպոսն մխիթարեալ ուրախացան ընդ արարս վարդապետին և գոհութեամբ օրհնէին զԱստուած » (եր. ԿԶ.):

Ժան Կազիմիր Թադաւորը լսելով այս շատ ուրախացաւ և Յօհան վարդապետին իւր մօտ կանչելով շնորհակալութիւն յայտնեց նորան. Յօհան մի տարի ամբողջ կացաւ Իլվովում և վերադարձաւ Ս. Էջմիածին: Թէև Առաքել վարդապետ Հայոց ՌՃԹԹուի Մայիսի տասին գրելով ասումէ. « Իսկ ժողովուրդքն Լովայ և Նիկօլ եպիսկոպոսն կան ի վերայ նոյն պայմանադրութեանն, զոր սահմանեցին Փիլիպպոս կաթողիկոսն և Յօհան վարդապետն մինչև ցայսօր » (եր. ԿԶ.). բայց Եղուխոններն ու Ալոյիսիոս Պիպուն մեռել չէին, որ Հայերը կարողանային նոցա քթի տակ ու ցանցերի մէջ հանգիստ մնալ. Առաքել վարդապետ միայն արտաքին կողմն է պատմում, և այն՝ ինչ որ ինքն գիտէր. բայց մենք գառնանք դէպի Պ. Եղեանի յառաջաբանը, որ իմանանք թէ ինչեր էին անում լատին կարգաւորները:

(Կարաւանխան).

Յ. Վ. Մ.